«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 4

23.12.2021թ.

1. Հեռակա ուսուցման դեպարտամենտում ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը որոշեց.

1.1. Բարձրացնել ֆինանսական կարգապահությունը համալսարանում:

1.2. 2021թ դեկտեմբերի 29-ին ավարտել ՀՈՒԴ քննաշրջանը: Մինչև 2022 թ. հունվարի 10-ն ամփոփել տվյալները և փոխադրումների հրամանները ձևակերպել՝ գործող կարգի համաձայն:

2. ՀԱԱՀ ստորաբաժանումների ավարտական կուրսերի դիպլոմային աշխատանքների կատարման նախապատրաստական աշխատանքների և խնդիրների վերաբերյալ.

2.1. Ընդունել ի գիտություն:

2.2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Կ. Մինասյանին և ՈՒԳԿՎ պետ Ա. Աղասարյանին.

- ԱՏ ֆակուլտետի դեկան Է. Ղազարյանի հետ վերանայել ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի թողարկող ամբիոնների դիպլոմային աշխատանքների թեմաները,

- ՈՒսումնասիրել համալսարանի թողարկող ամբիոնների աշխատակիցների կողմից ղեկավարվող դիպլոմային և մագիստրոսական աշխատանքների (ցերեկային և հեռակա ուսուցման համակարգերում) թվի համապատասխանությունը սահմանված կարգին,

- Պարզել ԱՏ ֆակուլտետի թողարկող ամբիոնների կողմից ՀՈՒ դեպարտամենտի առաջարկած թեմաները չհաստատելու պատճառը:

2.3. ԱՏ ֆակուլտետի ավարտական կուրսի վարձավճարի պարտք ունեցող ուսանողներին տալ լրացուցիչ ժամկետ մինչև ս.թ. դեկտեմբերի 30-ը՝ վարձավճարի պարտքը մարելու համար, իսկ չվճարելու դեպքում հեռացնել համալսարանից:

3. Հեռակա ուսուցման դեպարտամենտի Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն մասնագիտության 5-րդ կուրսի ուսանողուհի Կարինե Ասոյանին ֆինանսական օգնություն ցուցաբերելու հարցի վերաբերյալ.

Հեռակա ուսուցման դեպարտամենտի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» կրթական ծրագրի 2020-2021 ուս. տարվա վճարովի ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Կարինե Արտակի Ասոյանի համար սահմանել ուսման վարձի զեղչ առկա պարտքի 50%-ի չափով:

4. ՀԱԱՀ աշխատակիցներին 2021 թվականի դեկտեմբեր ամսվա համար լրավճար սահմանելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց.

4.1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի վարչական, պրոֆեսորադասախոսական, տնտեսական վարչության, Ա.Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի, «Բալահովիտ», «Ոսկեհատ» ուսումնափորձնական տնտեսությունների, «Զարթոնք» հանգստյան տան, «Ակունք» օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձնական կենտրոնի բոլոր հիմնական աշխատողներին, 2021 թվականի դեկտեմբեր ամսվա համար սահմանել լրավճար, (բացառությամբ՝ փորձաշրջանում գտնվող աշխատողների)՝

- 4 ամսից մինչև 6 ամիսը ներառյալ աշխատողներին՝ հիմնական մեկ դրույքի 50 տոկոսի չափով,

- 6 ամսից ավելի աշխատողներին՝ հիմնական մեկ դրույքի 100 տոկոսի չափով:

4.2. Հանձնարարել գլխավոր հաշվապահ Մ. Պողոսյանին՝ սեղմ ժամկետում քննարկել ՀԱԱՀ Շիրակի ակադեմիկոս Մ.Գ. Թումանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի աշխատակիցներին դեկտեմբեր ամսվա համար լրավճար սահմանելու հարցը և կայացնել որոշում:

5. 2019-2020 ուս տարվա Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Մելս Կարապետի Ամբարդանյանի ուսանողական իրավունքների վերականգնման հարցի վերաբերյալ.

Վերականգնել 2019-2020 ուս տարվա Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Մելս Կարապետի Ամբարդանյանի ուսանողական իրավունքները:

6. Հեռակա ուսուցման դեպարտամենտի ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման ժամանակ ծագող խնդիրների վերաբերյալ վերաբերյալ.

6.1. ՈՒսման վարձավճարի պարտքեր ունեցող ՀՈՒԴ ուսանողների հետ հարաբերությունները կարգավորել օպերատիվ ձևով և գործող կարգերի համապատասխան, հետևել ֆինանսական կարգապահությանը: Անհրաժեշտության դեպքում գումարի գանձումն իրականացնել դատական կարգով:

6.2. Եթե ուսման վարձավճարի պարտքի պատճառով հեռացված ՀՈՒԴ ուսանողը վերականգնվել է մի տարի ցած, որի համար ֆինանսական պարտավորություններ չի ունեցել, ապա այդ տարվա համար նրանից գումար չգանձել: Նույն կուրս վերականգնվելու դեպքում գանձել ուսման վարձավճարն ամբողջությամբ կամ առկա պարտքի չափով (եթե նախկինում այդ կուրսի վարձի մի մասը վճարված է եղել): ՈՒսման վարձի կրկնակի գանձում չկատարել:

6.3. ՈՒսման վարձավճարի պարտքի պատճառով համալսարանից հեռացված ՀՈՒԴ ուսանողների ուսանողական իրավունքները վերականգնելու դեպքում

առաջացած տարբերությունների համար գումարի գանձումը կատարել դիմումի ներկայացումից հետո մինչև 20 օրվա ընթացքում: Դեկանատի կողմից սահմանված ժամկետում առարկայական տարբերությունները չհանձնելու դեպքում նրան հեռացնել համալսարանից:

6.4. ՈՒսման վարձավճարի պարտքի պատճառով համալսարանից հեռացված ՀՈՒԴ ուսանողների ուսանողական իրավունքները վերականգնելու դեպում վճարման ցանկացած թերացման դեպքում հեռացնել համալսարանից:

6.5. ՈՒսման վարձավճարի պարտքի պատճառով համալսարանից հեռացված ՀՈՒԴ ուսանողներին ակադեմիական տեղեկանք տրամադրելուց առաջ գանձել ուսման վարձավճարի պարտքերը:

6.6. ՈՒսման վարձավճարի պարտքի պատճառով համալսարանից հեռացված ՀՈՒԴ ուսանողների ուսանողական իրավունքները վերականգնելու համար հրամանի ձևակերպումից առաջ պարտադիր պայման սահմանել որոշակի գումարի գանձումը (օրինակ՝ ուսման վարձավճարի 20%-ի չափով)՝ այն այնուհետև ուսման վարձին փոխանցելու պայմանով:

7. Աշխատանքային կիսամյակի կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ.

Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Կ. Մինասյանին, ՈՒԳԿՎ պետ Ա. Աղասարյանին՝ սեղմ ժամկետում կազմել և քննարկման ներկայացնել աշխատանքային կիսամյակի կազմակերպման, աշխատանքների իրականացման ուղեցույցի նախագիծ:

8. 2020-2021 ուստարվա «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտության «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» կրթական ծրագրի 2-րդ կուրսի վճարովի ուսուցման համակարգի ուսանող Ալբերտ Վաղարշակի Ավետիսյանին կրեդիտային պարտքերը վերահանձնելու հնարավորություն տալու հարցի վերաբերյալ.

2020-2021 ուստարվա «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտության «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ» կրթական ծրագրի 2-րդ կուրսի վճարովի ուսուցման համակարգի ուսանող Ալբերտ Վաղարշակի Ավետիսյանին թույլատրել հանձնելու առարկայական տարբերությունները:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ